ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

TAIEX փորձագիտական առաքելության «Կլիմայի փոփոխության և Փարիզյան համաձայնագրի վերաբերյալ կարողությունների զարգացում» խորագրով, ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհրդին կից ստեղծված Կոնվենցիայի ներքո երկրի հաշվետվայնության, Կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության և Ֆինանսավորման հարցերով մշտական միջգերատեսչական աշխատանքային խմբերի հանդիպման

ք. Երևան
4-6 ապրիլի 2023թ.

Ժամը՝ 11:00

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Գ. Գաբրիելյան	Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ
Ն. Բուդոյան	Շրջակա միջավայրի նախարարության կլիմայական վարչության պետ
Լ. Ավետիսյան	Շրջակա միջավայրի նախարարության ռազմավարական քաղաքականության վարչության պետ
Ն. Հակոբյան	Շրջակա միջավայրի նախարարության հողերի և ընդերքի քաղաքականության վարչության պետի տեղակալ
Ա. Ավետիսյան	Վիճակագրական կոմիտեի արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի պետ
Ն. Մանդալյան	Վիճակագրական կոմիտեի բնապահպանական վիճակագրության բաժնի ավագ մասնագետ
Մ. Մոմջյան	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության սակագնային բաժնի պետ
Ռ. Իսախանյան	Շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ

Հ. Գևորգյան	Էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսական ծրագրերի նախագծման վարչության գլխավոր մասնագետ
Գ.Կոշեցյան	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ֆինանսաբյուջետային բաժնի ավագ մասնագետ
Դ. Մուրադյան	ԵՄ-ի հետ տնտեսական համագործակցության վարչության Եվրամիության ծրագրերի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ
Տ. Միքայելյան	Արդարադատության նախարարության միջազգային իրավական համագործակցության վարչության պետի տեղակալ
Ն. Մարգարյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության վերականգնվող էներգետիկայի բաժնի ավագ մասնագետ
Ա. Ղուկասյան	Շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության ավագ մասնագետ
Թ. Աթալյան	Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման վարչության տարերային աղետների բաժնի մասնագետ
Ա. Գևորգյան	Շրջակա միջավայրի նախարարության անտառային քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Գ. Շահնազարյան	«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ
Ն.Գրիգորյան	«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու
Ա. Հարությունյան	ԿԳՄՍ նախարարության զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչություն

Զ. Աբրահամյան	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության փորձագետ
Կ. Հակոբյան	Կադաստրի կոմիտեի գլխավոր իրավաբան
Ն. Բակունց	«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն»-ի (ՀՎԿԱԿ) գլխավոր տնօրենի տեղակալ
Մ.Զվարա	Սլովակիայի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության Կլիմայի փոփոխության մեղմման բաժնի պետ
Տ. Օբուչինա	Խորվաթիայի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարության Մթնոլորտային օդի պահպանության և կլիմայի ծառայության պետ

ՕՐԱԿԱՐԳԸ՝ համաձայն հավելվածի:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ՝

Փորձագիտական առաքելության նպատակն էր ԵՄ լավագույն փորձի և առաջարկությունների փոխանակմամբ նպաստել «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայանգրի պահանջների և դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհրդի քարտուղարության և Խորհրդին կից գործող մեղմման և հարմարվողականության, կոնվենցիայի ներքո երկրի հաշվետվայնության և ֆինանսական հարցերով աշխատանքային խմբերի գործունեության բարելավմանը:
Հանդիպմանը մասնակցում էին «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհրդի երեք աշխատանքային խմբերի անդամները:

Բացման խոսքով հանդես եկավ շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության պետ Նոնա Բուդոյանը: Ողջունելով ներկաներին տիկին Բուդոյանը ներկայացրեց TAIEX փորձագիտական առաքելության ներկայացուցիչ ներ Խորվաթիայի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարության մթնոլորտային օդի պահպանության և կլիմայի ծառայության պետ, Տատյանա Օբուչինային և Սլովակիայի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության Կլիմայի փոփոխության մեղմման բաժնի պետ Միլան Զվարային:

Կլիմայական քաղաքականության համատեքստում ազգային պայմանների վերաբերյալ զեկույցներով հանդես եկան Նոնա Բուդոյանը Հայաստանի և ԵՄ փորձագետներ Տատյանա Օբուչինան՝ Խորվաթիայի և Միլան Զվարան՝ Սլովակիայի Հանրապետության օրինակով:

Աշխատանքային խմբերի անդամներին ԵՄ փորձագետները ներկայացրեցին իրենց երկրներում առկա Չափողականության, հաշվետվայնության և հավաստագրման (ՉՀՀ) համակարգի գործարկման օրենսդրական և ինստիտուցիալ դաշտի շրջանակները: Կլիմայական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ Ոսկեհատ Իսախանյանը ներկայացրեց ՉՀՀ համակարգի վերաբերյալ հայաստանյան իրավական և ինստիտուցիոնալ շրջանակները:

Քննարկվեցին ԵՄ երկրների փորձը, մասնավորապես ներկայացվեց"

- ✓ ջերմոցային գազերի գույքագրման հաշվետվություններին ներկայացվող պահանջները,
- ✓ մեղմման միջոցառումների համար մոնիթորինգ իրականացնելու նպատակով անհրաժեշտ ցուցիչների հնարավոր շրջանակը,
- ✓ կլիմայական խորհուրդների, ազգային խորհրդատվական մարմինների դերակատարումը, խորհուրդների առջև ծառացած մարտահրավերները և նրանց գործունեության խոչընդոտները,
- ✓ կլիմայական քաղաքականության արդյունավետ համակարգման վերաբերյալ ԵՄ հաջողված օրինակներ,
- ✓ «Կլիմայի մասին» օրենքի ընդունման ուղղությամբ Սլովակիայում և Խորվաթիայում իրականացված աշխատանքները:

Հանդիպման վերջին օրը լրացուցիչ քննարկում ծավալվեց՝ բացահայտելու խմբի մասնակիցների մտահոգությունները աշխատանքային խմբերի հանդիպումների արդյունավետության բարձրացման ուղղությամբ, ինչպես նաև աշխատանքային խմբերի կազմում ընդգրկված յուրաքանչյուր անդամի արդյունավետ դերակատարմանը խոչընդոտող հանգամանքները բարձրաձայնելու և հնարավոր լուծումները քննարկելու նպատակով:

Կլիմայական քաղաքականության վարչության պետ Նոնա Բուդոյանը ամփոփելով եռօրյա հանդիպումը, երեք աշխատանքային խմբերի անդամներին առաջարկեց առաջիկայում հանդիպել և քննարկել խմբերի գործունեության ակտիվացման նպատակով ԵՄ փորձագետների կողմից եռօրյա քննարկման հիման վրա կազմվելիք առաջարկությունները:

ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ԲՈՒԴՈՅԱՆ

Արձանագրեց՝
Ո. Իսախանյանը